ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1962 Общественные науки

Վարազդատ Հարությունյան

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՊԱԼԱՏՆ ՈՒ ՀԱՐԱԿԻՑ ՇԵՆՔԵՐԸ

Ուղիղ հազար երեք հարյուր տարի սրանից առաջ, 662 թվականին տվարտվեց հայ ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկի՝ Զվարթնոցի շինարարությունը։ Ստեղծագործական բարձր ավյունով հղացված այս հուշարձանախումբը մի տեսակ հանրագումար հանդիսացավ այն բեղմնավոր շինարարական-ճարտարապետական գործունեության, որ ծավալվեց Հայաստանում 5—7-րդ դդ. ընթացքում։

* * *

Զվարթնոց տաճարի և նրան կից Ներսես 3-րդ կաթողիկոսի պալատի մնացորդները, որոնք դարուս սկզբում հայտնաբերվեցին պեղումների հետևանքով, ընդհանուրի հետաքրքրությանն արժանացան։ Այս երկու հուշարձանները թերևս տարբեր էին իրենց բնույթով, սակայն նշանակությամբ՝ հայ ճարտարապետության պատմության համար։ Չնայած այդ հանգամանքին, ուսումնասիրության տեսակետից հետագայում միատեսակ չեղավ նրանց ճակատագիրը։ Զվարթնոց տաճարի մասին գրվեցին ու դեռ գրվում են ուսումնասիրություններ, այնինչ Ներսեսի պալատը՝ վաղ միջնադարի աշխարհիկ ճարտարապետության այդ չափազանց հետաքրքրական հուշարձանը շարունակեց թեկուզ ավելի պակաս ուշադրության։

Թորոս Թորամանյանը, որ սկսած 1904 թվականից, մասնակից դարձավ Զվարթնոցի պեղումներին ու հանդիսացավ այստեղ բացված երկու հուշարձանների չափագրողն ու առաջին հետազոտողը, կարևոր նշանակություն է վերագրել ինչպես մեկին, նույնպես և մյուսին։

Մեծավաստակ գիտնականը թեև տարբեր առիթներով հարևանցիորեն անդրադարձել է Զվարթնոցի աշխարհիկ կառուցվածքներին, տվել նրանց համառոտ նկարագիրը, սակայն այդ հուշարձանների ավելի մանրամասն ուսումնասիրությունը մենք չենք հանդիպում նրա գիտական ժառանգության մեջ։ Պիտի ենթադրել, որ այդպիսի ուսումնասիրություն պարունակելու էր Զվարթնոցի վերաբերյալ նրա ծրագրած մեծածավալ մենագրությունը, որն այդպես էլ թերավարտ մնաց հեղինակի մահվան հետևանքով։

Դվինի (1937) և Արուճի (1952) պալատների պեղումներն է՛լ ավելի ընդարձակեցին մեր պատկերացումները վաղ միջնադարի աշխարհիկ կառուցվածքների մասին և թույլ տվեցին կատարել որոշ եզրակացություններ այդ տիպի շենքերում առկա ճարտարապետական-հատակագծային որոշակի ընդ-

---

1 Թ. Թորամանյան, Նյութեր..., հատ. I, էջ 357—359-ում տրված է Ներսես 3-րդի կաթողիկոսարանի համառոտ նկարագրությունը, հատակագիծ և ավերակների ընդհանուր տեսքի լուսանկարը։ 2-րդ հատորում (էջ 93—94) ներկայացված է նույն հուշարձանի որոշ մասերի հատակագիծը։

տանրությունների վերաբերյալ[2]։ Բացի այդ, վերջին երկու տարիների ընթացքում կաթողիկոսարանի հարավակողմում ամբողջովին բացվեցին գինու հրնձանի ավերակներ, որոնք նույն ժամանակաշրջանի արտադրական եզակի կառուցվածքների մնացորդներ են ներկայացնում ու արժանի հատուկ ուշադրության։

*

Հայ պատմագիրներից առաջինը Սեբեոսն է, որ հավանաբար որպես ականատես հիշատակում է Զվարթնոց տաճարի, կամ Առապարի ս. Գրիգոր եկեղեցու և նրան կից բնակության տների կառուցման մասին Ներսես 3-րդ (Տայեցի կամ Շինող) կաթողիկոսի կողմից։ Իր վկայության վերջում խոսելով կաթողիկոսարանի շինարարության և Զվարթնոցի տերիտորիայի բարեկարգման մասին նա պատմում է «Ած ջուր և երբեր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տնկեաց այգիս և ծառատունկս, և շուրջանակի պատուարեալ պրնակութեամբ գեղեցկադիր յաւրինուածով (ընդգծումը մերն է—Վ. Հ.) բարձրր պարսպաւ ի փառս աստուծոյ»[3]։

Այսպիսով, Սեբեոսը բավական հանգամանորեն պատմելով Զվարթնոց տաճարի կառուցման վերաբերյալ, ակնարկում է նաև այնտեղ բնակություն հաստատելու մասին։ Մի ուրիշ մատենագիր՝ Հովհաննես Դրասխանակերտցին իր հերթին հանգամանորեն պատմելով Ներսես 3-րդ կաթողիկոսի կողմից Զվարթնոց տաճարի կառուցման մասին, այնուհետև խոսում է նաև կաթողիկոսարանի կառուցման, Զվարթնոցի ողջ շրջապատի կանաչապատման ու բարեկարգման մասին։ Անդրադառնալով հատկապես կաթողիկոսարանի շինարարությանը, նա վկայում է. «Բայց Հայրապետն Ներսէս պարապ անձին դտեալ դարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք։

Այլև կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երդումարդաց բստ պայմանի քաղաքականաց, եւ ածեալ ջուր ի Քասող գետոյ զամենայն աւազախիտ առապար դաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց»[4]։

Դրասխանակերտցու այս վկայության մեջ մենք տեսնում ենք անմիջական, ավելի կոնկրետ տեղեկություն կաթողիկոսարանի շինարարության վերաբերյալ, որը հիմնվում է կամ Սեբեոսի, կամ մեզ չհասած մի այլ աղբյուրի վրա։ Այլ պատմագիրները հիշատակում են Զվարթնոցի տաճարի կառուցման հանգամանքը Ներսես Տայեցու կողմից, տեղեկություններ են հաղորդում այդ հուշարձանի հետագա բախտի մասին, նրանցից ոմանք նույնիսկ հիշատակում են Ներսեսի պալատը, սակայն դրանց սկզբնաղբյուրները վերջին հաշվով հանդիսանում են Սեբեոսը և Դրասխանակերտցին ու առանձին նորություններ չեն պարունակում։

---

2 Վ. Հարությունյան, 7-րդ դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակագ. գիտութ. № 8), 1953, էջ 53—65։

3 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 192—193։

4 «Հովհաննէս Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 88։

Անդրադառնալով կաթողիկոսարանի կառուցման ճիշտ ժամանակի հարցին, պետք է նշենք, որ դրա պատասխանը կարելի է գտնել նորից մեր պատմագիրների, հատկապես Հովհաննես Դրասխանակերտցու մոտ, որը Զվարթնոցի կաթողիկոսարանի շինարարությունը հիշատակում է Թեոդորոս Ռշտունու մահվանից (658 թ.) հետո, երբ նրա կողմից հալածված Ներսես Տայեցին Հայաստան վերադառնալով, շարունակում է Զվարթնոցում կատարվող շինարարական աշխատանքները, որոնք իր բացակայության տարիներին հանձնարարել էր իր տեղապահ՝ Անաստաս Ակոռեցուն։

Պատմագրի նշված վկայության հիման վրա Թ. Թորամանյանը հայտնել է այն կարծիքը, թե «...Զվարթնոց եկեղեցին հիմնարկեցավ 643 թվականին ոչ ուշ, հավանորեն եկեղեցվո շինքը բավական առաջ դնալէն հետո, թերեւ ավարտման մոտ՝ հիմնարկեցան կաթողիկոսարանի հատուկ շինություններ։ Անաստաս Ակոռեցին շարունակեց կաթողիկոսարանի շինության մեկ մասը, բացառությամբ մեծ դահլիճի և անոր հարակից բաժանումներու, 659 թվականին, Ներսեսի վերադարձէն հետո ամբողջացուց կաթողիկոսական բնակության հատուկ շինքերը, և պարսպով պատեց եկեղեցին»։

Դրասխանակերտցու վերը հիշատակված վկայությունից կարելի է եզրակացնել նաև, որ կաթողիկոսարանի կառուցումն ամբողջությամբ իրականացվել է Ներսեսի վերադարձից հետո, սակայն, տվյալ դեպքում դա էապես դրությունը չի փոխում։ Անվիճելի պիտի համարել այն, որ Զվարթնոցի ողջ կոմպլեքսի շինարարության ամբողջացումը տեղի է ունեցել կաթողիկոսարանի, կամ գուցե, ինչպես ենթադրում է Թորամանյանը, նրա արևմտյան թևի շինարարության ավարտումով, ինչպես և շրջակայքի կանաչապատմամբ ու ընդհանուր բարեկարգմամբ։

Որ առաջ կառուցվել է տաճարը, որ նրա ավարտման ու օծման ժամանակ կաթողիկոսարանը դեռ գոյություն չի ունեցել, կամ թերավարտ է եղել, կարելի է հիմնավորել նաև պատմական մի այլ փաստով։ Հայտնի է, որ բյուզանդական Կոնստանդին 3-րդ կայսրը 652 թ. ձմռանը անձամբ ներկա գտնվելով Զվարթնոց տաճարի օծման հանդեսին, իջևանել էր ոչ թե Զվարթնոցի, այլ Դվինի կաթողիկոսարանում[6]։

Այսպիսով, պատմական ու մատենագրական բոլոր տվյալների քննարկումը բերում է այն անվիճելի եզրակացության, որ Զվարթնոցի աշխարհիկ դառուցվածքների, հատկապես Ներսես 3-րդ կաթողիկոսի պալատական շինքի շինարարությունը իրականացված է տաճարի հետ միաժամանակ, կամ մի քանի տարի ավելի ուշ, վերջին հաշվով՝ ոչ ավելի ուշ, քան 662 թվականը, երբ դախճանվել է ինքը Ներսեսը և դահ բարձրացել Անաստաս Ակոռեցին[7]։

* * *

Աշխարհիկ այս շինության մնացորդները գտնվում են Զվարթնոց տաճարի հարավային և հարավ-արևմտյան կողմում։ Հյուսիսից-հարավ ուղղված մի երկար միջանցքով շինքը բաժանվում է, բնույթով միմյանցից տարբեր.

---

6 Թ. Թորամանյան, Նյութեր.... հ. I, էջ 259։

6 «Պատմութիւն Սեբէոսի...», էջ 227։

7 Տե՛ս Բ. Առաքելյան, ժամանակագրական դիտողություններ, ՍՍՌՄ Գիտ. ակադեմիայի Հայկ. ֆիլիալի «Տեղեկագիր», № 1 (6), 1941, էջ 71։

երկու հիմնական մասերի։ Միջանցքից դեպի արևմուտք ընկած է կաթողիկոսարանի հանդիսավոր մասը։ Հարավից-հյուսիս ձգված երկու խոշոր դահլիճներով ու հարակից սենյակներով, իսկ միջանցքից դեպի արևելք տեղավորված են կաթողիկոսի անձնակազմի անդամների՝ հոգևորականների ու սպասարկուների բնակելի և այլ բնույթի սենյակները, որոնցից հյուսիսային դռները բացվում են դեպի տաճարն ուղղված երկար կամարասրահը (նկ. 1)։ Պալատական խումբը պահպանվել է կիսավեր վիճակում։

ՊԱԼԱՏԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՐՍԱԲԱԺԻՆԸ

Կաթողիկոսարանի այս հարկաբաժինը, դատելով երկու ընդարձակ դահլիճների առկայությունից, ծառայում էր հանդիսավոր նպատակների, կամ ինչպես Թ. Թորամանյանն է նշել պաշտոնական հարկաբաժին էր։ Այն ձգված է հարավից դեպի հյուսիս և պահպանված պարագծերով (հարավային պատը բացակայում է) 24,09 մ ընդհանուր երկարություն և 20,3 մ լայնություն ունի։ Բնորոշն այն է, որ երկու դահլիճներն էլ գտնվում են այս թևի արևելյան կողմում, այսինքն ավելի մոտ են տաճարային հրապարակին։

Դահլիճներից մեկը, որը դատելով հատակին պահպանված քարե խարիսխներից, սյունազարդ է եղել, իր երկայնական առանցքով ուղղված է հարավից դեպի հյուսիս։ Նրա հյուսիսային կողմում տեղավորված դահլիճի, որ ինչպես հետո կտեսնենք թաղածածկ է եղել, երկայնական առանցքը, նախորդի հետ ուղիղ անկյուն կազմելով, կողմնորոշված էր արևելքից-արևմուտք։ Դահլիճների այսպիսի, միմյանցից տարբեր դասավորությունը, ինչպես և ներքին ճարտարապետական լուծումը թույլ են տալիս նրանց վերագրել տարբեր նշանակություն։

Այս կապակցությամբ, սեղին է քննության առնել այն դատողությունները, որ կատարել է Թ. Թորամանյանը հենվելով մատենագրական տվյալների վրա։ Շենքի այդպիսի ընդարձակ սենյակները մատենագիրները «դահլիճ» և «տաճար» են անվանել, սակայն ըստ երևույթին այս տերմիններն էլ բնորոշում էին նրանց որոշակի տարբերությունը միմյանցից։ «Տաճար բառին,—ասում է Թ. Թորամանյանը,—աշխարհիկ մտքով փոխարինող բառ չունենք, ստիպված ենք բարդ բառով բնորոշել անոր իսկական նշանակությունը, ինչպես՝ տոնասրահ կամ հանդիսասրահ (salle de fete)։ «Արքունական տաճարներեն զատ,—շարունակում է նա այնուհետև,—կային նաև նախարարական և կաթողիկոսական տաճարներ, որոնց, բացի անվանական հիշատակությունէ՝ ուրիշ մանրամասնություններ չունենք պաշտոնական ձևակերպություններու մասին»[8]։

Թորամանյանը աշխատել է բացատրել նաև «դահլիճ» տերմինը։ Նրա կարծիքով «դահլիճը մի ընդարձակ սրահ էր, ուր կնստեր թագավորը իր ավագանիներով և կխորհրդակցեր սովորաբար հասարակական խնդիրներուն վրա։ Այց ինչ որ ավելի պարզ է, դահլիճին մեջ կընդունեին բոլոր պաշտոնական և ոչպաշտոն մարդիկ թագավորին ներկայանալու համար։ Ուրեմն, այս հատկությամբ դահլիճը, այժմյան իմաստով պետք է հասկանալ ընդունելության կամ ունկնդրության սրահ (Salle de réception ou salle d'audience)»[9]։

---

8 Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. 1, էջ 354։

9 Նույն տեղում, էջ 356։

Հենվելով ահա վերոհիշյալ տեսակետի վրա, թվում է թե պաշտոնական այս հարկաբաժնում սյունազարդ դահլիճը ծառայում էր հանդիսավոր ընդունելությունների և ճաշկերույթի, այսինքն այն տաճար էր։ Այս տեսակետից որպես կովան կարող են ծառայել պահպանված մի քանի մասեր, ինչպես



Նկ. 1. Զվարթնոցի գլխավոր հատակագիծը

օրինակ, դահլիճի երկարությամբ արևմտյան կողմից օժանդակ սենյակների և այդ շարքում լվացարաններով կահավորված հատուկ մի սենյակի առկայություն, ինչպես և կամարային հինգ բացվածքներով դահլիճի հաղորդակցումը թաղակապ միջանցքի հետ ու երկու դահլիճների միջև եղած դռան փաստը։

Սյունազարդ դահլիճին այսպիսի նշանակություն վերագրելը, ինքնըստ-

ինքյան հասկանալի է դարձնում նաև կից մյուս դահլիճի դերը կաթողիկոսարանի կոմպլեքսում։ Ամենայն հավանականությամբ այս ծառայում էր որպես ներսես 3-րդի գահադահլիճ, որում կատարվում էին պաշտոնական ընդունելություններ ու կրոնական բնույթի որոշ ծեսեր։ Ըստ երևույթին դրանով պետք է բացատրել, որ այս դահլիճն ուներ նույնպիսի կողմնորոշում, ինչպիսին սովորաբար ունեն եկեղեցական շենքերը (արևմուտք-արևելք) և բացի այդ, հյուսիսային կողմից նրան անմիջապես կից էին կաթողիկոսի անձնական սենյակների (նույն թվում ննջասենյակի) խումբը, իսկ հարավային կողմից նրան հարում էր տվյալ դեպքում սպասասրահի կամ ճեմասրահի դեր կատարող սյունազարդ դահլիճը։

Արժե մի փոքր ավելի հանգամանորեն կանգ առնել նրանցից յուրաքանչյուրի ճարտարապետական-տարածական ներքին կազմակերպման առանձնահատկությունների վրա, իհարկե, հիմք ընդունելով պահպանված մնացորդներով ընձեռնվող տվյալները։

Սյունազարդ դահլիճը պալատի արևմտյան թևի ամենից վատ պահպանված մասն է։ Նրա արևմտյան պատի հարավակողմյան կեսը և հարավային պատն ամբողջությամբ չեն պահպանվել. այդ պատճառով էլ եթե դահլիճի լայնությունը միանգամայն ստույգ որոշվում է (8,62 մ), ապա երկարությունն իմանալու համար անհրաժեշտ է նրա հարավակողմում պեղումներ կատարել, հարավային պատի հիմքերը գտնելու համար (եթե միայն նրանք պահպանվել են)[10]։

Սյունազարդ դահլիճի արևելյան պատը ներկայացնում էր մի մույթաշար, որի կամարածածկ հինգ բացվածքները (2,50—2,58 մ լայնությամբ) անմիջապես դուրս էին գալիս այն միջանցքը, որով բաժանվում էին միմյանցից պալատի երկու թևերը։ Ծածկը կրող 4 զույգ սյուները դասավորված են եղել հարավից-հյուսիս ձգված, երկու շարքով։ Նրանցից մեկ զույգը՝ ամենից վերջինը հյուսիսային կողմից, դրված է մի փոքր բարձր, քարե սալահատակի վրա, իսկ դրանցից դեպի հարավ ընկած մնացած 3 զույգ խարիսխները՝ ուղղակի հողե դետնի վրա։ Դահլիճի վատ պահպանված վիճակի պայմաններում էլ հնարավոր է ճշտորեն որոշել սյուների քայլը լայնական ու երկայնական ուղղությամբ։ Հյուսիսային մասում պահպանված սալահատակի վրայի հետքերից նկատելի են նրանց վրա դրված խարիսխների տեղերը (այժմ էլ խարիսխները դրված են նույն տեղերում), որից պարզվում է, որ զույգ սյունաշարքը դահլիճի ընդհանուր լայնությունը բաժանում էր 3 մասերի՝ միմյանցից մոտ 3 մ հեռավորությամբ։ Երկայնական ուղղությամբ սյուների քայլը հնարավոր է որոշել դահլիճի արևելյան պատը կազմող մույթաշարի առանցքային հեռավորությունների օգնությամբ։ Այստեղ միջսյունային տարածությունը կազմում է 3,77—3,81 մ այսինքն՝ մի քիչ ավելի, քան լայնական ուղղությամբ։

Այժմ, երբ հայտնի է սյուների քայլը, հնարավոր է դառնում նաև եզրակացություններ անել դահլիճի ծածկի մասին։ Դատելով պահպանված խարիսխների չափերից (ներքնասալը՝ 0,61×0,61 մ, վրայի գլանասալի տրամագիծը 0,49—0,52 մ, բարձրությունը—ներքնասալինը՝ 0,39 մ, գլանասալինը՝ 0,31,

---

10 Թ. Թորամանյանը (տես Նյութեր, I, էջ 237) պալատի հատակագծի մի տարբերակում սյունազարդ դահլիճի հարավային պատը ցույց է տալիս որպես ողջ պալատի հարավային պատի շարունակություն, դնելով մի գծի վրա։

ընդամենը 0,61 մ) քարե սյուների տրամագիծը կազմում է մոտ կես մետր, որն անշուշտ շատ փոքր է կամարներից ու թաղերից բաղկացած քարե ծածկ կրելու համար։ Այդ հանգամանքը մի կողմից, այս մասի պեղումների ժամանակ կամարային և թաղային կոնստրուկցիաներին վերաբերող փաստեր չհայտնաբերելը մյուս կողմից, մեզ նորից մղում են նույն եզրակացության, ինչ արել ենք Դվինի[11] և Արուճի[12] պալատների սյունազարդ դահլիճների կապակցությամբ. այսինքն նորից հանգում ենք այն կարծիքին, որ այս դահլիճի ծածկն էլ փայտակերտ է եղել։ Որ Դվինի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճը փայտածածկ էր, որոշակի տվյալների հիման վրա մեզնից բացի պնդել են այդ հուշարձանի նաև մյուս հետազոտողները[13]։ Այդ հարցում բոլորը համակարծիք են, վիճարկվում է միայն ծածկի ձևերի և նրա համատարած կամ մասնակի լինելու հարցը։



Նկ. 2. Սյունազարդ դահլիճի խոյակի բեկոր

Մեր տրամադրության տակ է ևս մի կարևոր տվյալ, որը թույլ է տալիս ենթադրություն անել Զվարթնոցի պալատի սյունազարդ դահլիճը փայտով ծածկված լինելու մասին։ Դա նույն դահլիճի արևմտյան պատի կրաբետոնե զանգվածի մեջ պատահականորեն գտնված խոյակի բեկորն է (նկ. 2), որի

11 Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները. Երևան, 1950, էջ 70—80։

12 Վ. Հարությունյան, 7-րդ դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, էջ 64։

13 Տե՛ս Н. М. Токарский, Архитектура древней Армении, 1946, էջ 43—46 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները. Երևան, 1952, էջ 110—122.

վրա ուշադրություն ենք դարձրել շատ տարիներ առաջ, դեռևս Դվինի կաթողիկոսարանի ուսումնասիրության կապակցությամբ[14]։

Կասկածից վեր է, որ Դվինի խոյակին նմանվող այդ բիկորի առկայությունը կրաբետոնի զանգվածի մեջ հիմք է տալիս մեզ պնդելու, որ սյունազարդ դահլիճի բոլոր սյուները պսակվում էին Դվինի-Արուճի պալատների խոյակների տիպի խոյակներով, իհարկե անհամեմատ ավելի փոքր չափերի, որովհետև Զվարթնոցի պալատի սյուների տրամագիծն էլ 31—32 սմ-ով փոքր էր նրանց սյուների տրամագծից։ Քանի որ այդ տիպի խոյակների տարածական ձևերի, ժողովրդական ճարտարապետության մեջ հանդիպող փայտե խոյակների ու փայտագմբեթ կոնստրուկցիաների հետ ունեցած անմիջական առնչության հարցը մեր կողմից արդեն հանգամանորեն քննված է Դվինի ու Արուճի պալատների նշված ուսումնասիրությունների մեջ, ուստի մենք հարկ չենք համարում այս առիթով նորից դրան անդրադառնալ։

Բնականաբար հետևում է մի հարց, պատահակա՞ն է արդյոք խոյակների այդպիսի նույնատիպությունը աշխարհիկ այս երեք շենքերում՝ Դվինի, Զվարթնոցի և Արուճի պալատների սյունազարդ դահլիճներում, թե՞ արդյունք է ճարտարապետական-կոնստրուկտիվ որոշակի սկզբունքի ընդհանրության։ Մենք, իհարկե, հակված ենք վերջինի կողմը։ Խոյակների նույնատիպությունն անշուշտ վկայում է նաև ծածկի ձևերի նույնատիպության մասին։

Այդպիսով, քննելով և բաղդատելով այդ բոլոր տվյալները, ի վերջո գալիս ենք այն եզրակացության, որ Զվարթնոցի կաթողիկոսարանի սյունազարդ դահլիճն էլ Դվինի և Արուճի նմանությամբ ծածկված էր փայտագմբեթ սիստեմով, նկատի ունենալով, որ դահլիճում սյուների դասավորության սիստեմը և սյուները պսակող խոյակների տարածական ձևերը վկայում են միայն այդպիսի ծածկի մասին։ Անդրադառնալով դահլիճի լուսավորության հարցին, պետք է նշենք, որ դահլիճը չէր կարող լուսամուտներ ունենալ ոչ հյուսիսային կողմից (քանի որ այս կողմից նրան կից էր մյուս դահլիճը), ոչ արևմտյան կողմից (քանի որ այս կողմից նրան կից էին մի շարք օժանդակ սենյակներ) և ոչ էլ այն կարող էր լուսավորվել արևելյան կողմի միջանցքից։ Հետևապես այդ նպատակի համար միակ ազատ պատը հարավայինն էր, որի վրա գոյություն ունեցող պատուհանները չէին կարող լուսավորել դահլիճի այդպիսի մեծ խորությունը, ուստի ճարտարապետը պիտի դիմեր լուսավորելու այն միջոցներին, որը ընդունված էր ժողովրդական բնակելի տների մեջ՝ երդիկին։ Այդ տեսակետը վկայող պատմագրական և կոնկրետ տվյալներ շատ կան։ Ուշագրավ է օրինակ, պատմագիր Հովհ. Մամիկոնյանի մի վկայությունը, որից իմանում ենք, որ տաճարները երդիկ ունեին։ «Եվ փակեալ զգրունս տաճարացն,— մի առիթով հայտնում է նա,— ետ բերել զգլուխն Միհրանայ, և կախեալ ընդ յերդն և ցուցանէր նոցա և ասէ»[15]։ Վերոհիշյալ վկայությունից կարելի է եզրակացնել, որ խոշոր տաճարների (կամ դահլիճների) լուսավորումը երդիկի միջոցով կիրառվում էր արդեն վաղ միջնադարում։ Հետագայում, 12—13 դարերում այն ավելի լայն տարածում է ստանում։ Հայտնի է, որ ժողովրդական բնակելի տների որոշ կոմպոզիցիոն սկզբունքներ, այդ թվում նաև երդիկների միջո-

14 Վ. Հարությունյան, Դվինի 5—7-րդ դդ. Հարտ. հուշարձաններ, էջ 65։

15 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 194 (ընդգծումները մերն են)։

ցով լուսավորելու և օդափոխելու սովորությունը կիրառելի է դառնում հասուն միջնադարի մոնումենտալ աշխարհիկ շենքերում։ Այդ ժամանակաշրջանի վանքային մի շարք շենքերը՝ ժամատները, սեղանատները, գրատները, ինչպես և առևտրական ճանապարհներին կառուցված կարավանատները, որպես կանոն լուսավորվում և օդափոխվում էին ժողովրդական բնակելի տներում ընդունված երդիկի միջոցով։

Ինչպես արդեն վերևում նշվեց, սյունազարդ դահլիճի արևմտյան կողմում եղել են մի քանի սենյակներ, որոնք դահլիճի համար անվիճելիորեն օժանդակ նշանակություն են ունեցել։ Դրանցից հարավակողմայինի պատերը պահպանվել են մասնակիորեն, այդ պատճառով էլ կարելի է որոշել միայն սենյակի լայնությունը, որ կազմում է 7,3 մ։ Եթե, ինչպես ենթադրվեց, սյունազարդ դահլիճը օգտագործվում էր որպես սեղանատուն, ապա պետք է, որ այս սենյակը ծառայեր խոհանոցի կարիքներին։ Սրան անմիջապես կից, հյուսիսային կողմից, գտնվում էին, 4,6×1,2 և 4,6×3,25 չափերի երկու սենյակներ, որոնցից առաջինը, դատելով նրա արևմտյան պատի մեջ ագուցված ջրհորդանաձև քարերից (որոնք դրված էին թեքությամբ դեպի դուրս), ակներևաբար ծառայում էր որպես լվացվելու սենյակ (զուգասենյակ), կամ սեղանատան կից ամաններ լվալու սենյակ (моечная)։

Գահաստահ։ Սյունազարդ դահլիճն ու հարակից օժանդակ սենյակների հարցը քննելուց հետո հարկ կա կանգ առնել նաև պալատի պաշտոնական հարկաբաժնի մյուս մասերի և առաջին հերթին թաղածածկ դահլիճի վրա, որը, ինչպես արդեն ասվել է, հյուսիսային կողմից անմիջապես կից էր սյունազարդ դահլիճին։

16,44 մ երկարություն և 9,90 մ լայնություն ունեցող այս դահլիճը երկայնական առանցքով դասավորված է արևմուտքից դեպի արևելք, այնպես, որ այն իր ամբողջ երկարությամբ հավասար է պալատի արևմտյան թևի ընդհանուր լայնքին, այսինքն նրա երկու արտաքին պատերը կազմում են պալատի այդ թևի արտաքին պատերի մասը։ Երկայնական պատերի կենտրոններում տեղավորված երկու դռների միջոցով դահլիճը հարավային կողմից հաղորդակցվում էր սյունազարդ դահլիճի, կամ տաճարի հետ, իսկ հյուսիսայինով՝ կաթողիկոսի անձնական սենյակների խմբի հետ։ Դահլիճն ամբողջությամբ սալահատակված է եղել տուֆաբարի սալերով, որոնցից մի մասը տեղում պահպանվել է։

Զափազանց հետաքրքիր էր լուծված դահլիճի ներքին տարածությունը, որի մասին դժվար չէ գաղափար կազմել նույնիսկ պահպանված մնացորդներով։ Ներսում, արևելյան պատից առաջ էին գալիս երկու ելուստներ, որոնց միջև, մեր կարծիքով, բարձր հարթակի վրա, երեսով դեպի արևմուտք տեղավորված էր կաթողիկոսական գահը՝ ամփոփված ելուստները կամարով պսակվող խորշի մեջ։ Դահլիճի հյուսիս-արևելյան անկյունում գտնվող ոչ մեծ լայնության մի այլ դուռ դահլիճը կապում էր կողքի սենյակի հետ, որտեղից տոնական ընդունելությունների ժամանակ գահին բազմելու համար դուրս էր գալիս Ներսես Տայեցին (նկ. 3)։

Դահլիճի երկայնական պատերից միմյանցից հավասար (2,90 մ) հեռավորությամբ և 1,85—1,87 մ չափով առաջ ելող երեքական որմնամույթերը, երկու կողմից, կազմում էին չորսական խորշեր, որոնց հատակները ավելի բարձր էին դահլիճի միջին մասի սալահատակից։ Թաղակապ այդ խորշերը,

որոնցում նստում էին ունկնդրության կամ ընդունելության ներկա գտնվողները, դահլիճին հաղորդում էին հանդիսավորություն։ Խորշերի միջև գտնվող բավականաչափ հաստ (1,34 մ) որմնամույթերի, որոնցով երկայնական պատերը ռիթմիկորեն բաժվում էին մասերի, դեպի դահլիճի կենտրոնն ուղղված ճակատները մշակված էին զույգ կիսասյուներով (նկ. 4)։



Նկ. 3. Գահադահլիճի հատակագիծը

Երկայնական պատերից առաջ եկող ելուստների, կամ որմնասյուների դերը չէր սահմանափակվում միայն նրանով, որ առաջացնում էին վերոհիշյալ խորշերը, այլ կատարում էին կարևոր կոնստրուկտիվ դեր, զգալի չափով կրճատելով դահլիճի ծածկի հենամիջային տարածությունը։

Չեն վրիպել Թորամանյանի զննող աչքից այս մասերը, որոնք ինտերյերի հետաքրքիր տարածական լուծման կարևոր միջոցներ էին։ «Թե ի՞նչ շուք ու փառավորություն ուներ այս տաճարը դրսեն ու ներսեն, դժբախտաբար հայտնի չէ, շքեղության ամեն մի հետք կորած է,—գրում է նա,—բացի վեց հոյակապ որմնասյուներեն. սրանք վերակազմելով տաճարը կստանա ճարտարապետական մի պարզ վեհություն»[16]։

Դահլիճի մնացորդները թեև մեծ հնարավորություն չեն ընձեռում նրա վերակազմության համար, այնուամենայնիվ ընդհանուր գծերով կարելի է կռահել նրա ծածկերի կոնստրուկտիվ լուծումը, որի մասին ժամանակին որոշ կարծիք հայտնել է նաև Թորամանյանը[17]։

Դահլիճի երկու երկայնական պատերից առաջ կառկառվող որմնասյուները կամ ելուստները միմյանց հետ միանում էին թաղակապ ծածկով, իսկ կենտրոնական, ավելի լայն (6,20 մ) մասը ծածկվում էր մի ընդհանուր դլա-

16 Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. 1, էջ 354։
17 Նույն տեղում։

նաձև թաղով, որը երկու կողմից հենվում էր ելուստների ու նրանց միացնող թաղերի վրա[18] (նկ. 5)։



Նկ. 4. Դահլիճի կտրվածքը

Դահլիճի տարածական-կոնստրուկտիվ հարցերի քննման կապակցությամբ, բնականաբար, նորից առաջ է գալիս նրա լուսավորման հարցը։ Անդրադառնալով դրան, պետք է նշենք, ինչպես և ժամանակին ճիշտ կերպով նկատել է նաև Թորամանյանը, որ դահլիճի ոչ հյուսիսային և ոչ էլ հարավային պատերի մեջ լուսամուտներ լինել չէին կարող, որովհետև այդ կողմերից նրան հարում էին պալատի տարբեր մասեր։ Արևելյան կողմից, մեր կարծիքով, նույնպես չպետք է որ պատուհան լիներ, եթե նկատի ունենանք, որ այդ պատի տակ գրվում էր կաթողիկոսական գահը։ Հետևաբար, մնում է ենթադրել, որ պատուհաններ կարող էին լինել միայն արևմտյան պատի մեջ և կենտրոնական թաղի գագաթին՝ նորից երդիկների ձևով[19]։

Դահլիճը լուսավորելու մի ուրիշ հնարավորություն ևս կարող էր լինել, թեև դա պակաս հավանական ենք համարում։ Եթե դահլիճի միջի մասի թաղակամար ծածկը հանգչեր ոչ թե անմիջապես ելուստների ու նրանց միացնող թաղերի, այլ նրանց վրա հենվող ու նրանցից փոքր ինչ բարձր ուղղաձիգ պատերի վրա, ապա բազիլիկատիպ շենքերի նմանությամբ, հնարավոր էր ներքին կենտրոնական տարածության լուսավորումն իրականացնել այդ պատերում տեղավորված պատուհանների միջոցով (վերևի-կողքի լուսավորության)[20]։

---

18 Ն. Տոկարսկին (տե՛ս Архитектура Армении, 1951, էջ 71) ներկայացնում է մի վերակազմություն, ըստ որի հիշյալ խորշերը ծածկված են գմբեթարքերով։ Ծածկի այդ ձևը թեև առաջին եկեղեցական շենքերում (Լմբատ) ուղղանկյան հատակագծի վրա կիրառություն ունեցել է, սակայն այստեղ այն հավանական չէ։

19 Թորամանյանը հակված է լուսավորելու այս միջոցի կողմը. այդ առիթով նույն տեղում նա գրում է. «...ամենից ավելի հավանականը որևէ լուսիջույց ունենալն է, ըստ ընդհանուր սովորության, ինչպես ցույց կուտան պատմական նկարագրությունները և ինչպես պետք է տեսնենք ուրիշ իրական ապացույցներով։

20 Դատելով Զվարթնոցի կոպլեքսի ընդհանուր վերակազմության նախագծից Ս. Մնացականյանը կանգնած է դահլիճի լուսավորման այս վերջին տեսակետի վրա (տե՛ս «Զվարթնոցի վերակազմության նոր նախագիծը», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 9, 1959, էջ 74)։

Հարակից սենյակներ. Զվարթնոցի պալատի արևմտյան հարկաբաժնի ընդհանուր նկարագրությունը լրիվ դարձնելու համար, անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել նաև սենյակների այն խմբի վրա, որ ընկած է քիչ առաջ քննած դահլիճից դեպի հյուսիս։ Այս մասում, դահլիճին անմիջապես կից են երկու սենյակներ, որոնք ընկած են հարավից-հյուսիս ուղղված ու դահլիճի հետ դռան միջոցով հաղորդակցվող ոչ մեծ (6,4×1,84) միջանցքի երկու կողմերում։ Միջանցքից դեպի արևելք տեղավորված է 7,5 մ խորությամբ և 6,4 մ լայնությամբ (մոտ 42 ք. մ), իսկ դեպի արևմուտք՝ 5,5—5,7 մ խորությամբ և 6,4 մ լայնությամբ (36 ք. մ) սենյակները։ Սրանց այդքան մոտ գտնվելը դահլիճին հիմք է տալիս կարծելու, որ մեծը ծառայում էր Ներսես Տայեցուն որպես ննջարան, իսկ փոքրը՝ սպասավորի սենյակ։



Նկ. 5. Դահլիճի ինտերյերը (վերակազմություն)

Ընդհանրապես, այս երկու սենյակների հատակագծման հարցի ճիշտ որոշումը սերտորեն կապված է սրանցից դեպի հյուսիս գտնվող մյուս սենյակների հարցի հետ։ Այս մասում ներկայումս պահպանվել են կիսանկուղային մի հարկի պատեր, տարբեր չափերի 3 սենյակներով, որոնց հատակը տեղանքի թեքության հետևանքով մոտ 2 մետրով ցածր է, դահլիճի և նրան կից երկու սենյակների հատակից։

Արդյոք այս ներքնահարկը, ինչպես կարծում են ոմանք, ուղղակի ծածկված էր հարթ ու այն ծառայում էր որպես տաճարային հրապարակի հետ կապ-

ված մի հարթակ[21], թե՞ նրա վրա կար ևս մի հարկ, հավասար կաթողիկոսական անձնասենյակների բարձրության, ահա մի հարց, որ կարիք ունի հատուկ քննության։ Պիտի նախօրոք ասել, որ թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակետի օգտին փաստերը ներկայումս չափազանց քիչ են, ուստի մնում է այդ ուղղությամբ պատողություններ անել գլխավորապես հիմնվելով շենքի հատակագծային-ֆունկցիոնալ լուծման պահանջների վրա։

Եթե ներքնահարկի սենյակներն առաջ պահեստի նշանակություն ունենային (որը շատ հավանական է), հապա հարց է ծագում, ինչպե՞ս էր իրականացվում կապը սրանց և կաթողիկոսական անձնասենյակների միջև։ Հազիվ թե այդ կապը դրսից լիներ, որպեսզի որևէ մթերք այնտեղից բերելու համար պետք լիներ միջանցքից դուրս գալ ներքնահարկը ծածկող կտորը, այնուհետև տաճարային հրապարակը, մտնել դեպի արևմուտք ուղղված միջանցքը, ու այնտեղից ներքնահարկը։ Բնակարանի համար կենսական նշանակություն ունեցող պահեստային մասի վերոհիշյալ կարգի կապը բուն բնակարանի հետ միանգամայն աննպատակահարմար էր։

Ահա, այդ և մի քանի ուրիշ հանգամանքներ, մեզ բերում են այն համոզման, որ ներքնահարկի վրա, մինչև տաճարային հրապարակը մտնող արևմտյան միջանցքը, դուցե և նրանից էլ այն կողմ, կար մի հարկ, որը կազմում էր կաթողիկոսարանի անձնասենյակների շարունակությունը դեպի հյուսիս։ Այդպիսի ենթադրությունը միանգամայն հավանական է թվում ամենից առաջ պահպանված պատերի դասավորությամբ։ Եթե դրանց հիման վրա պատկերացնելու լիներք, թե ինչպիսին կարող էր լինել երկրորդ հարկի հատակագծումը, ապա դժվար չէ կռահել բավականաչափ տրամաբանական մի լուծման մասին, որում մի այլ միջանցքից (կաթողիկոսական առանձնասենյակների միջանցքին ուղղահայաց և նրա հետ դռան միջոցով կապված) կից կային երկու սենյակներ։ 12,25 մ երկարություն և 2,40 մ լայնություն ունեցող այս միջանցքը ծառայում էր ոչ միայն հարակից սենյակների հետ կապ հաստատելու համար, այլ մեր կարծիքով նրա արևելյան ծայրում տեղավորված դռնով կարելի է դուրս գալ դեպի տաճարային հրապարակը, իսկ այդ մուտքը ծառայում էր ամենօրյա կարիքների համար։ Միջանցքի առկայությունը հիմնական, բնակելի հարկում անհրաժեշտ էր և բանական. ընդհակառակը՝ նրա գոյությունը ներքնահարկում, նկատի ունենալով հատակագծի 1×5 համաչափությունը, անտեսական կարիքների (մթերանոց, մառան) նպատակով օգտագործելու համար ոչ բոլոր դեպքերում հարմար է։

Այսպիսով, մեր պատկերացմամբ, արևմուտքից-արևելք ուղղված վերոհիշյալ միջանցքի հետ, դռների միջոցով, հաղորդակցվում էին նրա հյուսիսային ու արևմտյան կողմն ընկած երկու սենյակները, ինչպես և կաթողիկոսական առանձնասենյակները միմյանց ու դահլիճի հետ կապող միջանցքը։ Այս սենյակներից մեկի (ավելի հավանական ենք համարում արևմտյան կող-

---

21 Իր ժամանակին այդ կարծիքին է եղել Մեսրոբ վրդ. Տեր-Մովսեսյանը (տե՛ս նրա Раскопки развалин церкви св. Григория близ Эчмиадзина, տպվ. «Известия Имп. Археол. Комиссии»-ում, вып. 7, 1903, էջ 15)։ Ս. Մնացականյանը Զվարթնոցի կոմպլեքսի վերակազմության իր նախագծում նույնպես հարում է այդ կարծիքին։ Ինչպես երևում է նկ. 6-ից, սկզբում նույն կարծիքին հարում էր նաև հեղինակը, սակայն հետագայում վերանայեց այն։

մի) թաղանկապ ծածկի մեջ թողնված անցքում տեղավորված դնովի աստիճաններով էլ կապ էր հաստատվում ներքնահարկի բոլոր բաժինների հետ։

Կաթողիկոսական առանձնասենյակների վերը նշված կազմն ու նրանց փոխադարձ կապը, այսպիսով ապացուցվում է եղած մնացորդներով և ֆունկցիոնալ բացատրություն ստանում։

Ներքնահարկի սենյակների անտեսական հատկացումը (որպես շտեմարան և թոնրատուն) անվիճելի է, քանի որ պեղումների ժամանակ այստեղ բացվել են կարասներ և թոնիր[22]։ Դրանցից դեպի հյուսիս գտնվում է այն անծածկ միջանցքը (20,30 մ երկարությամբ և 1,68 մ լայնությամբ), որը ծառայել է որպես գլխավոր մուտք դեպի տաճարային հրապարակ։ Հիմա էլ այցելուները նրանով են անցնում դեպի Զվարթնոցի ավերակները։ Նրա հարավային պատի մեջ, մուտքից 9,5 մ հեռավորությամբ մի դուռ է բացվում դեպի կաթողիկոսական անձնասենյակների ներքնահարկը։ Միջանցքի հյուսիս-արևմտյան կողմում եռ մեկ-երկու սենյակների մնացորդներ են պահպանվել, որոնք, պիտի ենթադրել, նույնպես օժանդակ նպատակների (պահեստարանների, սպասավորների և այլն) էին ծառայում։

ՊԱԼԱՏԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐԿԱԲԱԺԻՆԸ

Պալատի այս մասն ընկած է միջանցքից դեպի արևելք։ Իշխող կարծիքների համաձայն այստեղ գերադանցապես կենտրոնացած էին հոգևորականության և այլ անձանց բնակարաններ, ինչպես և օժանդակ ուրիշ մասեր։ Նրա ընդհանուր լայնությունը (չհաշված սրահի խորությունը) կազմում է 19,70 մ, իսկ երկարությունը՝ 36,20 մ։

Հարկաբաժնի արևմտյան մասում, սկսած պալատը երկու հիմնական թևերի անջատող միջանցքից, երեք շարքով տեղավորված են ինը սենյակ, յուրաքանչյուր շարքում երեքական։ Դրանցից հինգը (երեքը հյուսիսային կողմից և երկուսը՝ հարավային) ենթադրվում է, որ բնակելի են եղել, ունեն 20 ք. մ մակերես և առանձին դռներ դեպի դուրս։ Այդ ենթադրությունն արվում է այն պատճառով, որ բնակելի համարված յուրաքանչյուր սենյակում կան 1,22—1,25 մ լայնությամբ և 2,07—2,10 մ երկարությամբ խորշեր, որոնք առաջանում են երկայնական պատերից դուրս շիշտված որմնամույթերով։ Իրենց չափերով նրանք միանգամայն հարմար են որպես մահճախորշեր (альков) ծառայելու համար։

Մնացած սենյակներից երկուսը նույնպես ունեն արտաքին դռներ։ Բոլոր սենյակների մուտքերի լայնությունը 1 մ է (հիշենք, որ այդպիսի չափեր ունեին Դվինի և Արուճի պալատի ներքին դռները)։ Միջին շարքի սենյակները, որոնց արևմտյան ծայրերը նույնպես մուտք ունեն դեպի դուրս, մակերեսով ավելի մեծ են (36 ք. մ) և դուրկ մահճախորշերից։ Երկրորդ և երրորդ սենյակները (հաշված արևմտյան կողմից) մուտքեր ունեն միայն կից սենյակներից։

Բնակելի սենյակների հյուսիսային շարքն ուղղված էր դեպի սրահը, որը, ինչպես և Արուճի տաճարի հարավային կողմում պեղված աշխարհիկ շենքը,

22 Տե՛ս Մեսրոբ վրդ. Տեր-Մովսեսյանի հիշատակված աշխատությունը, էջ 16։ Թորամանյանի կարծիքով (տե՛ս Նյութեր..., հ. 1, էջ 359) թոնիրը մերթ ավելի ուշ ժամանակների է վերաբերում, երբ այս սենյակները օգտագործվել են որպես բնակարան։

կողմնորոշված էր դեպի եկեղեցին։ Քարով սալարկված 1,5 մմ լայնություն ունեցող մի շերտի վրա պահպանվել են կամարաշարի մույթերի հատակագծում խաչաձև երեք խարիսխներ։

Չնայած պահպանված պատերի զգալի բարձրությանը (1,20—1,50 մ) սենյակները լուսավորող պատուհանների հետքեր չեն նկատվում, որպիսի հանգամանքը ենթադրել է տալիս, որ լուսավորությունը իրականացվում էր առաստաղից՝ երդիկների միջոցով։

Հատակագծում լայնական պատերի առկայությունը, բնակելի սենյակների մասում միմյանցից հավասար (5,08 մ) հեռավորությամբ, ենթադրել է տալիս, որ սենյակները թաղածածկ էին։ Այդ դեպքում սենյակների յուրաքանչյուր խումբը (բաղկացած երեք սենյակից՝ դասավորված հյուսիսից-հարավ) կարող էր ծածկվել մի ընդհանուր գլանաձև թաղով՝ վրան երկթեք կտուր։ Այդպիսով, հատակագծում դասավորված լայնական պատերը հիմք են ծառայում միմյանց զուգահեռ թաղերի համար։ Վերջիններիս երկթեք ծածկերի եռանկյունաձև ճակտոնները ուղղված էին դեպի հարավ և հյուսիս (նկ. 6)։ Բնակելի սենյակներից դեպի արևելք գտնվող մասերը կարող էին ծածկվել նույն ձևով, թեև նրանց հենամիջյան տարածությունները մի փոքր տարբեր էին (4,55 մ, 5,55 մ, 4,65 մ)։

Առավել առեղծվածային են արևելյան հարկաբաժնի արևելակողմյան սենյակները, որոնց պատկանելությունը տարբեր կերպով է մեկնաբանվել։ Հարավ-արևելյան անկյունում պահպանվել են միանեֆ բազիլիկ եկեղեցու մնացորդներ, որն ըստ Թ. Թորամանյանի կառուցված է եղել նախքան Զվարթնոցը և հետագայում կառուցված պալատի մեջն է առնվել։ Իր ժամանակին Խաչիկ Դադյանը կարծիք է հայտնել այն մասին, որ այդ ավերակները պատկանում են կռապաշտական տաճարի։ Ինչպես համոզեցուցիչ կերպով ցույց է տվել Թորամանյանը[23], այդ կարծիքը որևէ հիմք չունի։ Ինչ վերաբերում է եկեղեցու առանձին մասերի, գլխավորապես տուֆի մեծ խարիսխների (որոնք եկեղեցուն չէին կարող պատկանել[24] և անհայտ է, թե որտեղից են այստեղ փոխադրվել) այրված լինելուն, ապա անկասկած դա հրդեհի հետևանք է։

Անցնելով այս հարկաբաժնի արևելյան ծայրի սենյակների խմբի քննմանը, պետք է նախօրոք նշենք, որ Զվարթնոցի առաջին հետազոտողներից և ոչ մեկը. ո՛չ Թ. Թորամանյանը, ո՛չ Մ. Տեր-Մովսեսյանը և ո՛չ էլ Խ. Դադյանը պեղումների ընթացքում և դրանցից հետո հրապարակված իրենց հաշվետվություններում և հաղորդումներում, հատկապես չեն գրազվել հիշատակված խմբի սենյակների նշանակության պարզաբանմամբ, հավանաբար չտեսնելով դրա համար անհրաժեշտ տվյալներ։ Վերջին տասնամյակների ընթացքում գիտական գրականության մեջ ամրանում է այն կարծիքը, որ այդ խումբը իրենից ներկայացնում էր պալատի կոմպլեքսում ներկառուցված բաղնիք[25]։ Դրան հիմք են ծառայել պատերի և մույթերի մեջ եղած ուղղաձիգ անցքերը՝ իրականացված կավե թրծված խողովակներով։

23 Թ. Թորամանյան, Նյութեր..., հ. 2, էջ 94—106։

24 Թ. Թորամանյանը (տե՛ս Նյութեր..., 1, էջ 237) գծագրերից մեկում այդ բոլոր խարիսխները վերագրում է նույն եկեղեցուն, ենթադրելով, որ այն եռանեֆ բազիլիկ է եղել։

25 Տե՛ս «Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձաններ», 3, Վաղարշապատի շրջան (կազմող Կ. Ղաֆադարյան), Երևան, 1938, էջ 12, Վ. Հարությունյան, Զվարթնոց, Երևան, 1954, էջ 22։

Նկ. Ե. Զվարթնոց. տաճարային հրապարակը և կաթողիկոսարանը

Բաղնիք համարված մասը բաղկացած էր տարբեր մակերեսի 4 սենյակներից, որոնցից մեկը մեծ էր և 3 մուտքերով բաժանված երկու առանձին (9,92×5,75 մ և 7,35×3,63 մ մակերեսներով) ու միմյանց հետ հաղորդակցվող մասերի, իսկ երեքը ավելի փոքր մակերեսներով (4,55×3,78 մ, 5,55×3,70 մ և 4,65×4,71 մ) դասավորված միմյանց կից արևմուտքից դեպի արևելք ուղղությամբ։ Ենթադրվում է, որ վերը նշված երկու մեծ սենյակները ծառայում էին որպես լողարաններ, նրանց կից երկու սենյակները՝ հանդերձարաններ, որոնցից յուրաքանչյուրը ինքնուրույն մուտքով կապված էր լողարանների հետ, իսկ արևելյան ծայրի սենյակը՝ որպես ջեռուցարան՝ հարավ-արևմտյան անկյունում պահպանված կրակարանով։ Պետք է նշել, որ սենյակների այս իումը բաղնիքի վերադրելու դեպքում որոշ առումով անբացատրելի է մնում դռների նմանօրինակ դասավորությունը, բացի այդ չեն պահպանվել նաև բաղնիքի այնպիսի անվիճելի մասեր, ինչպիսիք են տաք և սառը ջրամատակարարման խողովակաշարերը, ընդհատակյա սյուները և այլն։

ՀՆԶԱՆԸ

Սեբեոսի վկայությունից արդեն հայտնի էր, որ Զվարթնոցի կոմպլեքսի շինարարությունը զուգակցվում էր ոչ միայն բարեկարգման, այլև ոռոգման հետ կապված աշխատանքներով։ Դրանից պիտի ենթադրել, որ տաճարի և պալատի շուրջը հնում տարածվում էին այգիներ, որոնք կազմում էին կաթողիկոսարանի ֆեոդալական տիրույթի մասը։ Հավանաբար նրանք զբաղեցնում էին զգալի տարածություն։

Այդպիսի այգիների գոյությունը հաստատվում է նաև հնագիտական տվյալներով. Զվարթնոցի պեղումների ժամանակ կաթողիկոսարանի արևմտյան թևի ներքնահարկերում գտնվել են մեծ կարասներ[26], որոնցից մեկը հիմա էլ ցուցադրվում է Զվարթնոցի թանգարանում։ Սակայն այստեղ գոյություն ունեցող մեծաքանակ այգիների անվիճելի ապացույց կարող են հանդիսանալ հատկապես հնձանի մնացորդները։ Նրանք մասնակիորեն պեղվել էին երեսնական թվականներին, ապա շարունակվեցին 1931 թ. Թ. Թորամանյանի ղեկավարությամբ, իսկ լրիվ կերպով պեղվեցին 1958 թ. հոկտեմբեր ամսին[27]։

Հնձանի ավերակները հայտնաբերվում են կաթողիկոսական պալատի վերը նկարագրված արևելյան թևից դեպի հարավ-արևմուտք ընկած տարածության վրա։ Նրանք ընկած են բազիլիկ եկեղեցուն զուգահեռ և վերջինիցս ընդամենը 6 մ հեռավորության վրա են (նկ. 1)։

Այդ եզակի, իր տեսակում միակը և գրականության մեջ համարյա անծանոթ[28] հուշարձանը, հանդիսանում է վաղ միջնադարի արտադրական շենքի բացառիկ հետաքրքիր մի նմուշ։

---

26 Ա. Տեր-Մովսիսյան, Հիշված աշխատությունը, էջ 16։

27 Հնձանի առաջներում կատարված պեղումների ամբողջացումը մեր խնդրանքով իրականացվեց Հայկ. ՍՍՌ Պետշինի հուշարձանների պահպանության բաժնի կողմից։ Աշխատանքները ընթանում էին նույն բաժնի աշխատակից Ս. Տեր-Ավագյանի ղեկավարությամբ և մեր ընդհանուր հսկողության ներքո։ Պեղումներն ավարտելուց հետո լրացված է հուշարձանի մեր կողմից կատարված չափագրությունը։

28 Զվարթնոցի հնձանի մասին համառոտ տեղեկություններ են հրապարակված դեռևս պեղումները չամբողջացրած տվյալներով Վ. Հարությունյանը (տե՛ս «Զվարթնոց», Երևան, 1947) և Հ. Խալիպպյանը (տե՛ս Հայաստանի արտադրական շենքերը, Երևան, 1961, էջ 15—17)։

Վաղօրոք բացված մասերի համեմատությունը նորերի հետ, որը կատարվեց հուշարձանի ուսումնասիրության և չափագրության ժամանակ, բերում են այն համոզման, որ հնձանը կառուցված է եղել երկու հերթի։ Սկզբում կառուցվել է հարավային կողմը, իսկ հետագայում, ըստ երևույթին, խաղողի այգիների տարածության ընդարձակման և մշակման համար ստացվող խաղողի քանակն ավելանալու կապակցությամբ, անհրաժեշտություն է առաջացել ընդարձակել նաև հնձանը, կցելով նախկինին նոր մաս՝ հյուսիսային կողմ, համարյա հար և նման հարավայինին։ Դրա հետևանքով հնձանի շենքն իր ընդհանուր հատակագծային հորինվածքով ստացվել է սիմետրիկ իր միջանցքի կամ բակի նկատմամբ, թեև առանձին մասերամասներով (կալերի ու տաքարների քանակ, տաքարների ձևի և մեծության) որոշ տարբերություն կա (նկ. 7)։





Նկ. 7. Հնձանի հատակագիծը

Հնձանի ուղղանկյունաձև շենքը՝ բավականաչափ ընդարձակ է և զբաղեցնում է 620 ք. մ տարածություն (երկարությունը 32,6 մ, լայնությունը՝ 19 մ)։ Միջանցքը կամ բակը, ինչպես ասված է վերևում, հնձանը բաժանում է երկու հիմնական մասերի։ Վաղօրոք պեղված հարավային կողմում կան 3,5 մ ընդհանուր լայնությամբ չորս կալեր։ Նրանք դրսի կողմից շրջապատված են հաստ պատերով (շարված սրբատաշ տուֆ քարերով, կրաշաղախով), իսկ իրարից բաժանված են բարձր միջնորմներով։ Մույթի երկու հատվածներն իրենց մակերեսով ավելի մեծ են և հավասար (32 ք. մ), իսկ երկու միջինները՝ փոքր են և նույնպես հավասար (18,5 ք. մ)։ Ծայրի երկու կալերի զգալի մեծությունը բացատրվում է տաքարների առկայությամբ նրանցում, խաղողա-

յութի (շիրայի) կուտակման համար։ Այդ նպատակով տաքարներին կից երկու կալերի հատակները (որոնք սալարկված են գետաքարով ու վրայից սվաղված գեր կրաշաղախով), իրենց թեքությամբ ուղղված են յուրաքանչյուր տաքարի կողմը։ Նշված հատակների վրա կատարվում էր խաղողի ճզմումը և հյութը հոսում էր հատակով, ապա ջրհորդանաձև քարի միջոցով թափվում տաքարի մեջ։

Նկ. 8. Կլոր տաքարներից մեկը

Տաքարների պատները շարված են սրբատաշ տուֆ քարով, կրաշաղախով և ապա խնամքով սվաղված են գեր կրաշաղախով, որպեսզի կանխվի ներծծումը։ Մասնակիորեն պահպանված կրաշաղախի վրա հիմա էլ դժվար չէ նկատել սև խաղողահյութի հետքերը։ Հարավային կողմի հատակագծում կլոր տաքարները բավականաչափ տարողունակ են։ Դրանք բոլորը միասին կարող էին տեղավորել մոտ 10 հազար լիտր հյութ։ Նրանց տրամագիծը 1,80×1,83 մետր է, խորությունը՝ 1,65 մետր։ Տաքարների քարով սալարկված և կրաշաղախով սվաղված հատակների վրա կան լրացուցիչ փոսեր, որոնք ծառայում էին տաքարի միջի խաղողահյութի մնացորդները շերեփելու համար։

Փոքր ինչ այլ կերպ է լուծված հնձանի հյուսիսային կողմը։ Համարյա նույն (3,75 մ) լայնության դեպքում, այստեղ կալերի թիվը եղզմում էր երեք (19—20 ք. մ մակերեսով)։ Յուրաքանչյուր կալի արևելյան կողմից գտնվում էր մեկական խցիկ (6,5—7 ք. մ մակերեսով), որոնք բաժանվում էին իրենց սպասարկող կալերից միջնորմներով, իսկ կից կալերից ավելի հաստ պատերով։ Յուրաքանչյուր խցիկի մեջ տեղավորված էր գետնի մեջ թաղված մեկական քառակուսի, տարբեր չափերի (հաշված արևելյան կողմից) 1,25×1,25, 1,8×1,14, 1,8×1,8 և տարբեր խորության տաքար։ Սրանք կառույ-

ված են նույն եղանակով, ինչ վերը նկարագրված հարավակողմյան կլոր տաքարները։ Հյուսիսային շարքի արևելյան կողմի տաքարի տարողությունը 2000 լիտր էր, նրա կողքինները՝ 4800, իսկ հաջորդները՝ 5500 լիտր (նկ. 8)։

Ի տարբերություն հարավային կողմի, որտեղ խաղողահյութը տաքարն էր հոսում նրա երկու կողմում տեղավորված կալերից, այստեղ յուրաքանչյուր տաքարը լցվում էր իր արևմտյան կողմում գտնվող միակ կալից։ Կալերի հատակների ուշադիր հետազոտությունից նկատելի է, որ երկարատև օգտագործման ընթացքում, նրանց հատակի սվաղը 3—4 անգամ նորոգվել է։

Վերը բերված ամբողջ նկարագրությունից դժվար չէ պաղատիար կազմել արտադրական պրոցեսի կազմակերպման մասին հնձանում։ Խաղողը (սայլերով կամ գրաստներով) երկու ծայրային կողմերում եղած դռներով կամ դարպասներով (դրանցից մեկի հետքը նկատելի է տեղում), ներս էր բերվում միջանցքը կամ բակը, իսկ հետո թափվում կալերը, որտեղ և ճմլվում։ Խաղողահյութը հոսում էր տաքարները, իսկ այնտեղից՝ քաշում էին կարասները։

Անտարակույս հնձանի շենքը ծածկված էր, որովհետև չէին կարող նրանում աշխատանքները կատարվել բաց երկնքի տակ, մանավանդ, որ աշնան ամիսներին, երբ տեղի էր ունենում խաղողի ճմլումը, կարող էին անձրևներ տեղալ։ Հուշարձանի ներկա վիճակի պայմաններում, երբ տեղում հազիվ նշմարելի են (այն էլ ոչ ամենուրեք) պատերի ուղղությունները, ծածկի կոնստրուկցիայի հարցին կարելի է պատասխանել միայն ենթադրաբար։ Նկատի ունենալով ներքին երկայնական պատերի (որոնցով կալերի շարքը բաժանվում էր միջանցքից) բարակությունը, թաղային ծածկի առկայությունն այստեղ բացառվում է։ Ավելի հավանական կարող է լինել հնձանի ողջ շենքի վրա փայտյա թեթև ծածկույթի գոյությունը։ Արտաքին կապիտալ և ներքին բարակ պատերն ու միջնորմները տվյալ դեպքում ցանկապատի դեր էին կատարում և սահմանափակ բարձրություն ունեին։

Դատելով հնձանի արևմտյան կողմում պահպանված մոնումենտալ կերպով կառուցված այլ շենքերի պատերի մնացորդներից, այստեղ, ըստ երևույթին, գոյություն են ունեցել տնտեսական նշանակություն ունեցող նաև ուրիշ շենքեր, որոնց հայտնաբերման համար անհրաժեշտ է պեղումներ կատարել հնձանի արևելյան, արևմտյան և հարավային կողմերում։

* *

Նոր նյութերի հիման վրա Զվարթնոցի տաճարին կից դեռևս 1300 տարի առաջ կառուցված աշխարհիկ շենքերի կոմպլեքսի մեջ մտնող առանձին մասերի համատեղ քննումը և նրանց համեմատությունը նույն դարաշրջանի Հայաստանի պալատական այլ (Դվին, Արուճ) շենքերի հետ, բերում է այն եզրակացության, որ հայկական ճարտարապետության այս բնակավայր նույնպես ներկայացված է վաղ միջնադարին պատկանող ուշագրավ հուշարձաններով՝ կառուցված եկեղեցականից միանգամայն տարբեր հատակագծային, կոնստրուկտիվ և դեղարվեստական միասնական սկզբունքներով, որոնց աղբյուրը հանդիսացել է ժողովրդական ճարտարապետությունը։